

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

METHODOLOGICAL NOTES

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ
SYSTEM OF NATIONAL ACCOUNTS

Ազգային հաշիվների համակարգը (ԱՀՀ)

տնտեսությունում մակրոտնտեսական գործընթացների նկարագրման և վերլուծության համար կիրառվող փոխկապակցված ցուցանիշների համակարգ է:

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)

Համակարգի առանցքային ցուցանիշն է, որը բնութագրում է երկրի տնտեսությունում արտադրված ապրանքների ու ծառայությունների (հանած միջանկյալ սպառումը) արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար:

ՀՆԱ-ն հաշվարկվում է երեք եղանակով՝ արտադրական, եկամուտների օգտագործման (ծախսային) և եկամուտների ձևավորման:

ՀՆԱ-ն արտադրական եղանակով

Արտադրական եղանակով ՀՆԱ-ն, շուկայական գներով, հաշվարկվում է տնտեսությունում արտադրված համախառն ավելացված արժեքի (հիմնական գներով) ու արտադրանքի և ներմուծման զուտ հարկերի (առանց սուբսիդիաների) հանրագումարով:

Հիմնական գներով ավելացված արժեքն արտադրության ցուցանիշ է, որը որոշվում է ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերությամբ և չի ներառում արտադրանքի հարկերը, սակայն ներառում է արտադրանքի սուբսիդիաները:

ՀՆԱ-ն եկամուտների օգտագործման եղանակով (ծախսային եղանակ)

Եկամուտների օգտագործման եղանակով հաշվարկված ՀՆԱ-ն իրենից ներկայացնում է ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման և զուտ արտահանման հանրագումար: Այն ցույց է տալիս, թե ինչպես են տնային տնտեսությունները, պետական հիմնարկները և տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները բաշխում իրենց տնօրինվող եկամուտը վերջնական սպառման և ինստիտուցիոնալների միջև:

ՀՆԱ-ն եկամուտների ձևավորման եղանակով

ՀՆԱ-ի հաշվարկն ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների, ԱՀՀ-ի շրջանակում կատարվող ՀՆԱ-ի հաշվարկման երեք եղանակներից մեկն է: Սակայն, այն անկախ հաշվարկ չի համարվում, քանի որ, ընդունված մեթոդաբանության համաձայն, եկամտային ոչ բոլոր

System of National Accounts (SNA) – is a system of coherent indicators used for description and analysis of macroeconomic processes in the economy.

Gross domestic product (GDP) is the key indicator of the system, which characterizes value of goods and services produced in the economy of a country for final consumption, capital formation and net export (except intermediate consumption).

GDP is calculated in three ways: from production side, from use (expenditure) side, from income side.

GDP from production side

GDP at market prices from production side is defined as the sum of gross value added (at basic prices) produced in the economy, and net taxes (less subsidies) on products and import.

Value added at basic prices is an output indicator, which is defined as the value of output of goods and services less the value of intermediate consumption and doesn't include taxes on product, but includes subsidies on product.

GDP from use (expenditure) side

GDP from use side is defined as the sum of final consumption expenditures, gross capital formation, and net export. It shows how the households, government units and non-profit institutions serving households distribute their disposable incomes among the final consumption and savings.

GDP from income generation side.

GDP from income generation side is one of the three approaches to calculate GDP in the SNA framework. However it's not an independent calculation, as, according to the accepted methodology, not all income indicators are derived

ցուցանիշներն են ստացվում ուղղակի հաշվառմամբ, դրանց մի մասը հաշվարկվում է հաշվեկշռման եղանակով:

ՀՆԱ-ի ձևավորումն ըստ եկամուտների աղբյուրների արտացոլում է անմիջապես արտադրական գործընթացին մասնակցող միավորների, ինչպես նաև պետական հիմնարկների և տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացված սկզբնական եկամուտները: Այս հաշվարկներում համախառն շահույթը (համախառն խառը եկամուտը) հանդիսանում է հաշվեկշռող հոդված և որոշվում է որպես արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի (շուկայական գներով) և աշխատողների աշխատանքի վարձատրության և արտադրության ու ներմուծման գուտ հարկերի տարբերություն:

Նշված եղանակը կիրառվում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ ՀՆԱ-ի արժեքային կառուցվածքի վերլուծության, այլ ոչ թե անվանական ծավալի կամ դինամիկայի որոշման համար:

Ապրանքների և ծառայությունների հաշիվն ինքնատիպ ամփոփ աղյուսակ է: Ինչպես և բոլոր մյուս հաշիվները, այն նույնպես կազմված է երկու մասից՝ «ռեսուրսային», որտեղ ցույց են տրվում ապրանքների ու ծառայությունների թողարկումն ու ներմուծումը, արտադրանքի հարկերը և սուբսիդիաները և «օգտագործման» մասում՝ սպառման (միջանկյալ և վերջնական) համար օգտագործվող ապրանքների և ծառայությունների ծավալները, հիմնական և շրջանառու կապիտալի կուտակումը, ապրանքների և ծառայությունների արտահանումը:

Արտադրության հաշիվն արտացոլում է անմիջականորեն արտադրական գործընթացին վերաբերվող գործառնությունները: Այս հաշվում որոշվում է ավելացված արժեքը, որը հանդիսանում է ՀՆԱ-ի հաշվարկման հիմքը:

Թողարկումն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում տնտեսությունում արտադրված ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը:

by direct calculation, some of them are calculated through the balancing method.

GDP from income generation side reflects primary incomes receivable by entities directly involved in production, and also by government units and non-profit institutions serving households. Here, the gross operating surplus (gross mixed income) is a balancing item, which is defined as the difference between Gross Domestic Product, calculated by production side (at market prices), and compensation of employees and net taxes on production and import.

This method is used to analyze the value structure of GDP, but not to determine its nominal volume or changes.

Goods and services account is a special summary table. Like all other accounts, it consists of two parts: «resources», which represent the output and imports of goods and services, taxes and subsidies on products and «uses» which represent uses of goods and services in terms of consumption (intermediate and final), gross capital formation and exports of goods and services.

Production account records transactions directly linked with the production process. In this account the value added is defined, which is the basis for calculating the Gross Domestic Product.

Output is the total value of goods and services produced in economy in a certain period.

Միջանկյալ սպառումը կազմված է այն ապրանքների ու ծառայությունների արժեքից, որոնք հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ սպառվում կամ վերափոխվում են արտադրության ընթացքում: Միջանկյալ սպառման մեջ չի ներառվում հիմնական կապիտալի սպառումը:

Միջանկյալ սպառման կազմում առանձին ներառվում են ֆինանսական միջնորդների անուղակիորեն չափվող ծառայությունները:

Համախառն ավելացված արժեքը հաշվարկվում է ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ որպես ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերություն: «Համախառն» արտահայտությունը ցույց է տալիս, որ ցուցանիշն իր մեջ ներառում է արտադրության գործընթացում հիմնական կապիտալի սպառման արժեքը:

Արտադրության և ներմուծման զուտ հարկերը ներառում են արտադրանքի հարկերը և արտադրության այլ հարկերը: «Զուտ» արտահայտությունը նշանակում է, որ հարկերը ցույց են տրվում առանց համապատասխան սուբսիդիաների:

Արտադրանքի հարկերը ներառում են այն հարկերը, որոնց չափերն ուղղակիորեն կախված են թողարկված արտադրանքի արժեքից: Դրանց թվին են դասվում ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, ներմուծման հարկը և մաքսատուրքը:

Սուբսիդիաները անհատույց ընթացիկ վճարներ են, որոնք պետությունից միջոցներից հատկացվում են ձեռնարկություններին՝ կապված ապրանքների և ծառայությունների արտադրության, վաճառքի կամ ներմուծման հետ:

Արտադրության այլ հարկերը ներառում են այն բոլոր հարկերը, որոնցով հարկվում են արտադրող միավորներն արտադրության գործընթացի կամ արտադրության գործոնների օգտագործման հետ կապված, բացի արտադրանքի հարկերից: Այդպիսի հարկերի չափերն ուղղակիորեն կախված չեն արտադրության ծավալներից և շահութաբերությունից: Դրանք չեն ներառում նաև կառուցվածքային միավորների ստացած շահույթի կամ այլ եկամուտների վրա ցանկացած հարկերը: Արտադրության այլ հարկերից են՝ բնական պաշարների օգտագործման և բնապահպանական վճարները, գույքահարկը, հողի հարկը, արտոնագրային վճարները, կազմակերպություններից զանձվող պետական տուրքերը և այլն:

Եկամուտների ձևավորման հաշիվը

Intermediate consumption consists of the value of the goods and services, which are either transformed or used up by the production process in the reporting period. Intermediate consumption excludes consumption of fixed capital.

Intermediate consumption separately covers financial intermediation services indirectly measured.

Gross value added is calculated as the value of output of goods and services less the value of intermediate consumption by economic activities. The term «Gross» shows that the indicator includes the value of fixed capital consumed in the process of production.

Net taxes on production and imports include taxes on products and other taxes on production. The term «Net» means that taxes are shown excluding the related subsidies.

Taxes on products consist of taxes, whose rates directly depend on the value of product produced. Taxes on products include: value added tax, excise tax, taxes and duties on imports.

Subsidies are current unrequited payments that government makes to enterprises on the basis of the production, sale or import of goods and services.

Other taxes on production consist of all taxes, except taxes on products, payable by producing unit in connection with production process or using of production factors. The rates of these taxes do not directly depend on the volume and profitability of production. They also do not include any taxes on profit or other incomes received by institutional units. Other taxes on production include: taxes on payments for environmental protection and use, taxes on assets, taxes on land, licenses, government dues levied from organizations, etc.

Generation of income account is a

եկամուտների սկզբնական բաշխման հաշվի բաղկացուցիչ մասն է: Այն արտացոլում է անմիջականորեն ապրանքների ու ծառայությունների արտադրությանը մասնակցող կառուցվածքային ռեզիդենտ-միավորների կողմից վճարած սկզբնական եկամուտները: Բացի այդ, այն արտացոլում է սկզբնական եկամուտների տեսակներն՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների և հատվածների:

Կառուցվածքային միավորը համարվում է երկրի ռեզիդենտ, եթե այդ տարածքում է գտնվում դրա տնտեսական շահերի կենտրոնը, այսինքն, եթե այն զբաղվում կամ նախատեսում է զբաղվել տնտեսական գործունեության որևէ տեսակով կամ գործառնություններով երկար ժամանակահատվածում, սովորաբար, մեկ տարվա ընթացքում:

Աշխատողների աշխատանքի վարձատրությունը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանում վարձու աշխատողներին կատարած աշխատանքների համար գործատուի կողմից դրամական կամ բնեղեն ձևով վճարած բոլոր վարձատրությունների գումարով: Աշխատողների աշխատանքի վարձատրությունը հաշվառվում է հաշվեգրված գումարներով և իր մեջ ընդգրկում է նաև սոցիալական ապահովագրության վճարները, եկամտահարկը և այլ վճարները, որոնք աշխատողների կողմից ենթակա են վճարման:

Համախառն (զուտ) շահույթն ավելացված արժեքի այն մասն է, որը մնում է արտադրողներին վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության և արտադրության հարկերի վճարման հետ կապված ծախսերը կատարելուց հետո: «Համախառն» կամ «զուտ» արտահայտությունը տվյալ դեպքում ցույց է տալիս, թե արտադրության գործընթացում հիմնական կապիտալի սպառումը հաշվի առնված է այդ ցուցանիշում, թե՛ ոչ:

Տնային տնտեսություններին պատկանող կազմակերպությունների արտադրական գործունեության արդյունքում ձևավորված շահույթը կոչվում է «համախառն խառը եկամուտ», քանի որ այն արտացոլում է թե՛ ձեռնարկատիրոջ կողմից կատարված աշխատանքի վարձատրությունը, թե՛ ձեռնարկատիրական շահույթը:

Սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը եկամուտների սկզբնական բաշխման հաշվի երկրորդ բաղկացուցիչ մասն է: Այն բնութագրում է ռեզիդենտների (կառուցվածքային միավորների կամ հատվածների) միջև արտադրական գործունեությունից և սեփականությունից ստացած սկզբնական եկամուտների բաշխումը:

constituent element of primary distribution of income accounts. It reflects primary incomes payable by resident institutional units directly engaged in the process of production of goods and services. Besides, it reflects types of primary incomes by economic activities and sectors, in which they originate.

An institutional unit is considered to be resident within a country when it has a centre of economic interest in that territory, i.e. is engaged or is going to get engaged in some economic activities or transactions during a long period, usually assimilated to one year.

Compensation of employees is defined as a total remuneration, in cash or in kind, payable by employer to employees in return for work done during the accounting period. Compensation of employees is recorded on the basis of accrual amounts and includes social insurance contributions, income tax, and other payments payable by employees.

Gross (net) operating surplus is the part of value added which remains with producers after deducting outlays related to the remuneration of employees and taxes on production. The term «gross» or «net» in this case shows whether this indicator includes consumption of fixed capital or not.

Surplus accruing from the processes of production by unincorporated enterprises owned by households is called «Gross mixed income» because it reflects both the remuneration of work done by the owner of enterprise and the entrepreneurial income.

Allocation of primary income account is the second component of the primary distribution of income account. It shows how primary incomes obtained from the production activity or property are distributed among residents (institutional units or sectors).

Սեփականությունից ստացված եկամուտներն այն եկամուտներն են, որոնք ստացվում կամ վճարվում են կառուցվածքային միավորի կողմից օգտագործման նպատակով տրամադրված ֆինանսական, հողի և այլ ոչ ֆինանսական ակտիվների (ընդերք և այլ բնական ակտիվներ, պատենտ, արտոնագիր և այլն) օգտագործման արդյունքում:

Սկզբնական եկամուտների սալդոն բնութագրում է այն եկամուտները, որոնք ձևավորվում են կառուցվածքային ռեզիդենտ-միավորների մոտ՝ արտադրությանը մասնակցելու արդյունքում, ինչպես նաև ստացվում են սեփականությունից: Այն որոշվում է, որպես ռեզիդենտ-միավորների կողմից ստացված և վճարված բոլոր սկզբնական եկամուտների տարբերություն: Համախառն հիմքով հաշվարկված, այսինքն, մինչև հիմնական կապիտալի սպառման դուրս բերումը, սկզբնական եկամուտների սալդոն ամբողջ տնտեսության մակարդակով հավասար է **համախառն ազգային եկամտին**:

Եկամուտների երկրորդային բաշխման հաշիվն արտացոլում է կառուցվածքային միավորների կամ հատվածների սկզբնական եկամուտների սալդոյի վերափոխումը տնօրինվող եկամտի՝ ընթացիկ տրանսֆերտների ստացման և փոխանցման արդյունքում՝ առանց բնաիրային ձևով ստացվող և փոխանցվող սոցիալական տրանսֆերտների:

Տրանսֆերտը գործառնություն է, երբ կառուցվածքային մեկ միավորը տրամադրում է ապրանքներ, ծառայություններ, ակտիվներ (ֆինանսական և ոչ ֆինանսական) մեկ այլ միավորի՝ առանց դրանց դիմաց ապրանքի, ծառայության կամ ակտիվի ձևով փոխհատուցում ստանալու: Տարբերում են ընթացիկ և կապիտալ տրանսֆերտներ: Դրանք կարող են իրականացվել դրամական և բնեղեն ձևով:

Ընթացիկ տրանսֆերտներն ընդգրկում են հետևյալ հիմնական տեսակները՝ եկամտի և ունեցվածքի ընթացիկ հարկեր և այլն, հատկացումներ սոցիալական ապահովագրությանը, սոցիալական նպաստներ, կամավոր մուծումներ և ոչ կապիտալ բնույթի նվերներ, տուգանքներ և այլն:

Տնօրինվող եկամուտն այն եկամուտն է, որը վերջնական սպառման կամ խնայողության նպատակով տնօրինում է կառուցվածքային միավորը: Այն հավասար է համախառն ազգային

Property incomes include incomes receivable or payable by institutional units in return for putting the financial assets, land, and other non-financial assets (minerals, other natural resources, patents, licenses, etc) at the disposal of other institutional units.

Balance of primary incomes characterizes incomes receivable by institutional units as a result of their participation in production or from property. It is defined as the difference between all primary incomes receivable and payable by resident units. At the level of the total economy the balance of primary incomes calculated gross, i.e. before deduction of consumption of fixed capital, is equal to **Gross National Income**.

Secondary distribution of income account shows how the balance of primary incomes of an institutional unit or sector is transformed into its disposable income by the receipt and payment of current transfers excluding social transfers in kind.

Transfer is a transaction, in which one institutional unit provides a good, service or (financial and non-financial) asset to another unit without receiving from the latter any good, service or asset in return as counterpart. There are current and capital transfers. They may be either in cash or in kind.

Current transfers include the following main types: current taxes on income, wealth, etc.; social security contributions and benefits; voluntary payments and gifts of non-capital character, fines, etc.

Disposable income is defined as income left at institutional units' disposal for final consumption or saving. It is equal to the National Income less income payable as current transfers plus current

եկամտից հանած որպես ընթացիկ տրանսֆերտ փոխանցված եկամուտները, գումարած ստացած ընթացիկ տրանսֆերտները: Բոլոր կառուցվածքային ռեզիդենտ-միավորների տնօրինվող եկամուտների գումարը հավասար է **համախառն ազգային տնօրինվող եկամտին**:

transfers receivable. The sum of disposable incomes of all resident institutional units is equal to **Gross National Disposable Income**.

Օգտագործման փուլում համախառն ներքին արդյունքը հաշվարկվում է որպես ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման, համախառն կուտակման և զուտ արտահանման (առանց ներմուծման) հանրագումար:

From the use side Gross Domestic Product is calculated as the sum of final consumption of goods, gross capital formation, and net export (excluding import).

Տնօրինվող եկամտի օգտագործման հաշիվը ցույց է տալիս, թե տնային տնտեսությունները, պետական հիմնարկները և տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները ինչպես են իրենց տնօրինվող եկամուտը բաշխում վերջնական սպառման ծախսերի և խնայողության միջև:

Use of **National Disposable Income account** shows how households, government units and non-profit institutions serving households (NPISHs) distribute their disposable income between final consumption expenditures and saving.

Վերջնական սպառման ծախսերը ձևավորվում են տնային տնտեսությունների, տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև կոլեկտիվ և անհատական ծառայությունների ու ապրանքների համար կատարված պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերից: Այսպիսի խմբավորումը ցույց է տալիս, թե ով է ֆինանսավորում վերջնական սպառման ծախսերը:

Final consumption consists of household final consumption expenditures, final consumption expenditures of non-profit institutions serving households, and also general government final consumption expenditures on collective and individual goods and services. Such grouping shows which sector pays for final consumption.

Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը ներառում են տնային տնտեսությունների այն ծախսերը, որոնք ուղղված են բոլոր առևտրական կազմակերպություններում, քաղաքային շուկաներում և չկազմակերպված (փողոցային) առևտրի վայրերում, կենցաղային և բնակարանային-կոմունալ սպասարկման, ուղևորատար տրանսպորտի, կապի, հյուրանոցների, մշակույթի, առողջապահության և կրթության առևտրային հիմնարկներում՝ սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, ինչպես նաև այն ծախսերը, որոնք ուղղված են տնային տնտեսությունների կողմից սեփական սպառման համար արտադրված և որպես աշխատանքի վարձատրություն բնեղեն տեսքով ստացած ապրանքների և ծառայությունների սպառմանը (բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների գյուղատնտեսական արտադրանքը, սեփական կացարանում ապրելու պայմանականորեն չափվող ծառայությունները):

Household final consumption expenditures include outlays for purchasing consumer goods and services from all trading organizations, urban markets and through non-organized trade (street vendors), from public service, passenger transport, communications establishments, hotels, commercial institutions of culture, health care, education, and also other consumption of goods and services in kind, both produced for own use (agricultural produce of personal subsidiary plots, imputed services of owner-occupied dwellings) and received as labour remuneration.

Պետական հիմնարկների կողմից անհատական բնույթի ապրանքների և ծառայությունների վերջնական սպառմանն ուղղված ծախսերը բաղկացած են պետական հիմնարկների կողմից անհատական սպառման համար նախատեսված սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կատարած ծախսերից: Այսպիսի ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին:

Պետական հիմնարկների կողմից կոլեկտիվ բնույթի ծառայությունների վերջնական սպառմանն ուղղված ծախսեր. այս ցուցանիշը տարբերվում է նախորդից նրանով, որ այստեղ հաշվի են առնվում պետական բյուջեի հաշվին կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները, որոնք բավարարում են ոչ թե առանձին տնային տնտեսությունների, այլ ամբողջ հասարակության պահանջումները (ծախսեր, որոնք ուղղված են պաշտպանությանը, կառավարմանը, ճանապարհային տնտեսությանը, բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող գիտական գործունեությանը, կոմունալ տնտեսությանը, գյուղատնտեսությունը սպասարկող կազմակերպությունների ծառայությունների մատուցմանը):

Տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների վերջնական սպառման ծախսերը տնային տնտեսություններին անվճար տրամադրվող սպառողական ապրանքների ու ծառայությունների համար հասարակական կազմակերպությունների կողմից կատարած ծախսերն են: Դրանց մեջ ներառվում են նաև կազմակերպությունների կողմից իրենց աշխատողներին կրթության, առողջապահության և մշակույթի ոլորտում մատուցված անվճար ծառայությունները:

Հիմնական կապիտալի համախառն կուտակումն իրենից ներկայացնում է ռեզիդենտ-միավորների կողմից միջոցների ներդրումը հիմնական կապիտալ հանդիսացող օբյեկտներում՝ արտադրության մեջ դրանք օգտագործելու ճանապարհով ապագայում նոր եկամուտ ստեղծելու նպատակով:

Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունն ընդգրկում է արտադրական պաշարների, անավարտ արտադրության, պատրաստի արտադրանքի և վերավաճառքի համար նախատեսված ապրանքների պաշարների փոփոխությունը: Տվյալ ժամանակահատվածի ընթացքում պաշարների արժեքի փոփոխությունը հաշվարկվում է որպես այդ ժամանակաշրջանի վերջին և սկզբին առկա պաշարների արժեքների

General government final consumption expenditures on individual goods and services consist of outlays of government institutions on consumer goods and services intended for personal consumption. Such outlays are financed from the state budget and off-budget funds.

General government final consumption expenditures on collective services. This category is different from the previous one since it includes services rendered by organizations, which are compensated from the state budget; such services meet needs of community as a whole, but not of individual households (expenditures on defense, administration, roads, scientific activity financed from the state budget and out-budget funds, communal services and services of institutions serving agriculture).

Final consumption expenditures of non-profit institutions serving households are outlays of public associations on consumer goods and services provided to households free. Also here are included services in education, health care, culture provided free by organizations to their employees.

Gross fixed capital formation is defined as resident units' investments in fixed assets with the purpose of using them in production to create new incomes in future.

Changes in inventories consist of changes in stocks of output, work-in-progress and finished products, and products for resale. The value of changes in inventories during a given accounting period is equal to the difference between the value of inventories at the end and at the beginning of the year, measured at average market prices of the period in order to eliminate the influence of price

տարբերություն՝ գնահատված դիտարկվող ժամանակահատվածի միջին շուկայական գներով՝ գների ազդեցությունը չեզոքացնելու նպատակով:

Կապիտալի հետ գործառնությունների հաշիվն արտացոլում է հիմնական կապիտալի համախառն կուտակման և նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխության ֆինանսավորումը, ներառյալ կապիտալ տրանսֆերտների ձևով հարստության վերաբաշխումը տնտեսության հաստատվածների և «արտերկրի» միջև:

Կապիտալի հետ գործառնությունների ֆինանսավորման հիմնական աղբյուր է խնայողությունը, որը տեղափոխվում է եկամուտների օգտագործման հաշվից: Այդ գործառնությունների ֆինանսավորման մյուս աղբյուրը ստացված կապիտալ տրանսֆերտներն են՝ հանած փոխանցված կապիտալ տրանսֆերտները:

Կապիտալի հետ գործառնությունների հաշվի հաշվեկշռող հոդվածը զուտ վարկավորումը (+) կամ զուտ փոխառությունն (-) է:

Կապիտալ տրանսֆերտներն իրենցից ներկայացնում են ակտիվների (բացի կանխիկ դրամից և նյութական շրջանառու միջոցներից) կամ դրանց ձեռք բերման համար միջոցների սեփականության իրավունքի անհատույց փոխանցումը մեկ կառուցվածքային միավորից մյուսին: Կապիտալ տրանսֆերտները սովորաբար լինում են միանվագ և նշանակալի՝ ըստ գործառնության մեծության, կապված մասնակիցների կողմից ակտիվների օգտագործման կամ դուրսգրման հետ:

Զուտ վարկավորումը (+) կամ զուտ փոխառությունը (-) ֆինանսավորման աղբյուրների գերազանցումն է կամ պակասուրդը (դեֆիցիտ) ոչ ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերման ծախսերի համեմատությամբ: Ամբողջ տնտեսության մակարդակով զուտ վարկավորումը կամ զուտ փոխառումը ցույց է տալիս ռեսուրսների այն քանակությունը, որը երկիրը տրամադրում է «արտերկրին» կամ «արտերկիրը» տրամադրում է երկրին:

Զուտ արտահանումը հաշվարկվում է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերություն և իր մեջ ներառում է արտերկրների (ներառյալ ԱՊՀ երկրները) հետ Հայաստանի Հանրապետության առևտրի շրջանառությունը:

Գնահատման սկզբունքները: Գնահատումն ընթացիկ գներով իրականացվում է գործառնություններում փաստացի օգտագործված

changes.

The capital account shows the funding of gross fixed capital formation and change in inventories, including the redistribution of wealth among the sectors of the economy and the rest of the world through capital transfers.

The main source for financing capital transactions is saving, which is brought forward from the use of disposable income account. The other sources of funding of these transactions are capital transfers receivable less payable.

The balancing item of the account is net lending (+) or net borrowing (-).

Capital transfers are transactions, in which the ownership of an asset (other than cash and inventories) is transferred from one institutional unit to another, or in which cash is transferred to enable the recipient to acquire another asset, without any counterpart being received in return. Capital transfers are usually non-recurrent and large-scale in value transactions connected with acquisitions or disposals of assets by participants in the transaction.

Net lending (+) or net borrowing (-) is defined as the excess or deficit of sources of funds over the expenditures on non-financial assets. At the level of the total economy, net lending or net borrowing shows the amount of resources paid to the rest of the world and received from the rest of the world.

Net export is defined as the difference between export and import of goods and services and includes the trade turnover of the Republic of Armenia with foreign countries (including the CIS countries).

Valuation principles. Valuation at current prices is made by prices actually used in transactions.

գներով:

ՀՆԱ-ի արտադրությունն ու օգտագործումը գնահատվում են այն ընթացիկ շուկայական գներով, որոնք գերակշռում են արտադրանքի արտադրության և օգտագործման ժամանակահատվածում:

Տնտեսական գործունեության տեսակներում արտադրության և եկամուտների ձևավորման կառուցվածքի վրա հարկերի և սուբսիդիաների տարբեր դրույթաչափերի ազդեցությունը չեզոքացնելու համար ցուցանիշները գնահատվում են հիմնական գներով:

Հիմնական գինն արտադրողի միավոր ապրանքի կամ ծառայության համար ստացած գինն է, առանց ապրանքների և ներմուծման հարկի, սակայն, ներառյալ ապրանքների և ներմուծման սուբսիդիաները:

Ոչ շուկայական ապրանքներն ու ծառայությունները գնահատվում են կամ շուկայում իրացվող նմանատիպ ապրանքների ու ծառայությունների շուկայական գներով, եթե դա հնարավոր է որոշել, կամ արտադրության ծախսերով, եթե շուկայական գինը բացակայում է (մասնավորապես այդպես են գնահատվում պետական հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ծառայությունները):

ԱՀՀ հաշվարկներում արտադրանքի թողարկման, միջանկյալ սպառման, շահույթի և նյութական շրջանառու միջոցների փոփոխության ցուցանիշները հաշվարկվում են առանց **հոլդինգային շահույթի (վնասի)**, որը ներկայացնում է արտադրանքի արժեքի այն մասը, որը ձևավորվել է արտադրանքի՝ պահեստում գտնվելու ընթացքում գնի փոփոխության արդյունքում: Բարձր սղաճի պայմաններում հոլդինգային շահույթը (վնասը) կարող է զգալի լինել:

Համադրելի գներով (նախորդ տարվա) վերագնահատումը կատարվում է, ինչպես ըստ արտադրված համախառն ներքին արդյունքի, այնպես էլ՝ ըստ դրա օգտագործման ցուցանիշների: ՀՆԱ-ի արտադրության ցուցանիշների վերագնահատումը, համադրելի գներով, իրականացվում է կրկնակի դեֆլյատացիայի եղանակի կիրառմամբ, որի ժամանակ ավելացված արժեքի մեծությունը ստացվում է, որպես համադրելի գներով գնահատված թողարկման և միջանկյալ սպառման մեծությունների տարբերություն:

Թողարկման վերագնահատումը համադրելի գներով կատարվում է երկու եղանակով.

- հաշվետու ժամանակաշրջանի ընթացիկ գներով տվյալները դեֆլատավորելով համապատասխան գների ինդեքսներով,
- բազային տարվա ընթացիկ գներով

Production and use of GDP are valued at the current market prices, which are prevalent in the period of produce production and use.

In order to eliminate the influence of various taxes and subsidies in different economic activities of the economy on the structure of production and generation of income, indicators by industries are valued at basic prices.

Basic price is the amount receivable by the producer for a unit of a good or service, excluding any taxes on products and imports, but including subsidies on products and imports.

Non-market goods and services are valued either using market prices of similar goods and services realized in the market, if it's possible to define, or by expenses on production, if the market price is not available (particularly, services of government units and non-profit institutions are valued like that).

In the SNA, output, intermediate consumption, operating surplus and changes in inventories are calculated excluding **holding gains (losses)**, which are defined as the value of products created due to changes in prices during the period when the products were held in stocks. Under the conditions of inflation holding gains (losses) could be sizeable.

Revaluation at comparable prices (of previous year) is made for both production and use side GDP.

The indicators of the production of GDP are revalued at comparable prices by the double deflation method where the value added is the difference between the value of output and the value of intermediate consumption at comparable prices.

Revaluation of output at comparable prices is made by two methods:

- deflation of data at current prices for the accounting period using appropriate price indices.
- extrapolation of data at current prices for the

տվյալներն էքստրապոլացիայի ենթարկելով՝ ֆիզիկական ծավալի ինդեքսներով կամ բնեղեն ցուցանիշներով:

Համադրելի գներով ՀՆԱ-ի օգտագործման ցուցանիշների, վերագնահատման համար կիրառվում են համապատասխան գների ինդեքսները (սպառողական գների ինդեքսը, կապիտալ ներդրումների գների ինդեքսը և այլն) և բնեղեն ցուցանիշները:

ՀՆԱ-ի ինդեքս դեֆլյատորն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի համադրելի գներով գնահատված ՀՆԱ-ի ծավալների հարաբերությունն է: Ի տարբերություն ապրանքների և ծառայությունների գների ինդեքսի՝ ՀՆԱ-ի դեֆլյատորը բնութագրում է աշխատանքի վարձատրության, շահույթի (ներառյալ խառը եկամուտները), հիմնական կապիտալի սպառման փոփոխությունները գների փոփոխման արդյունքում, ինչպես նաև զուտ հարկերի անվանական ծավալի փոփոխությունը:

Արտադրական և ծախսային եղանակներով հաշվարկված ՀՆԱ-ի մեծությունների միջև վիճակագրական շեղումը ցույց է տալիս տարբեր եղանակներով հաշվարկված ՀՆԱ-ի մեծությունների միջև շեղումը: Արտադրական եղանակով և եկամուտների օգտագործման եղանակով հաշվարկված հաշիվների յուրաքանչյուր մասը ձևավորվում է ինքնուրույն՝ վիճակագրական տեղեկատվության սեփական հոսքերի հիման վրա, որի հետևանքով դրանց վերաբերյալ հանրագումարները կարող են միմյանցից որոշ չափով տարբերվել:

base year using volume indices or physical indicators.

To revalue the indicators of use of GDP at comparable prices, appropriate price indices (consumer price index, investment price index, etc.) and physical indicators are applied.

GDP deflator index is the ratio of GDP at current prices to GDP at comparable prices of the previous period. Unlike the goods and services prices index, the GDP deflator measures the changes in compensation of employees, operating surplus (including mixed income), and consumption of fixed assets arisen from changes in prices, and also net taxes.

The statistical discrepancy between the gross domestic product by production and expenditure side shows the difference between GDPs calculated by different methods. Every component included in the GDP calculated by the production and expenditure approaches are formed independently based on own statistical information flows, therefore their grand totals can be different from each other to a certain extent.

ԿԱՆՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ INSTITUTIONAL UNITS BY INDUSTRIES OF ECONOMY

Ազգային հաշիվների համակարգը կազմված է իրար հաջորդող փոխկապակցված հաշիվներից, որոնք ներառում են մի շարք դասակարգումներ, հայտնի չափով կազմում են համակարգի հիմքը և թույլ են տալիս ընդգրկել տարբեր տեսակետներ, ինչպիսիք են կառուցվածքային միավորները և հատվածները:

Կառուցվածքային միավորներ են հանդիսանում տնտեսական այն միավորները, որոնք ընդունակ են տիրապետել ակտիվներին և իրենց անունից ստանձնել պարտավորություններ: Դրանք կարող են զբաղվել գործառնությունների բոլոր տեսակներով և տնտեսական գործունեության բոլոր տեսակետներից հանդիսանալ որոշումներ ընդունելու կենտրոններ: Կախված իրենց հիմնական գործառնություններից, վարքից և նպատակից, կառուցվածքային միավորները խմբավորվում են ըստ հիմնական կառուցվածքային հատվածների: Հատվածն իրենից ներկայացնում է իրագործվող գործառնությունների և ֆինանսավորման աղբյուրների տեսանկյունից միատարր կառուցվածքային միավորների համակցություն: Տարբերակվում են ազգային տնտեսության հետևյալ հինգ հատվածները.

- *ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ),*
- *ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ),*
- *պետական կառավարման մարմիններ,*
- *տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ,*
- *տնային տնտեսություններ:*

Ոչ ֆինանսական կազմակերպությունները կառուցվածքային միավորներ են, որոնք գլխավորապես զբաղվում են շուկայական ապրանքների և ոչ ֆինանսական ծառայությունների արտադրությամբ:

Ֆինանսական կազմակերպությունները կառուցվածքային միավորներ են, որոնք հիմնականում զբաղվում են ֆինանսական միջնորդությամբ կամ օժանդակ ֆինանսական գործունեությամբ:

Պետական կառավարման մարմինները կառուցվածքային միավորներ են, որոնք իրենց քաղաքական գործառնությունների իրականացմանը և տնտեսության կարգավորման դերին զուգընթաց, արտադրում են առավելապես ոչ շուկայական ծառայություններ՝ անհատական կամ կոլեկտիվ սպառման համար, ինչպես նաև վերաբաշխում են եկամուտներն ու հարստությունը:

The System of National Accounts consists of coherent and consistent accounts and a number of classifications that are the base of the system to a certain extent and allow covering the most different aspects, such as institutional units and sectors.

Institutional units are economic entities that are capable of owning assets and, in their own rights, incurring liabilities. They are able to engage in all kinds of transactions and to take economic decisions. Institutional units are grouped into the main institutional sectors on the basis of their principal functions, behavior and objectives. Sector is a universe of institutional units, which are similar from the viewpoint of their functions and financing sources. There are the following five sectors of the national economy:

- *non-financial corporations*
- *financial corporations*
- *general government*
- *non-profit institutions serving households (NPISH)*
- *households.*

Non-financial corporations are institutional units whose principal activity is the production of market goods and non-financial services.

Financial corporations are institutional units which are principally engaged in financial intermediation or in auxiliary financial activities.

General government is institutional units, which in addition to fulfilling their political responsibilities and their role of economic regulation, produce principally non-market services for individual or collective consumption and redistribute income and wealth.

Տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններն իրավաբանական անձինք են, որոնք գլխավորապես զբաղվում են տնային տնտեսությունների համար ոչ շուկայական ծառայությունների արտադրությամբ: Դրանց կարգավիճակը թույլ չի տալիս այդ կազմակերպությունները գրանցող միավորների համար լինել եկամտի, շահույթի կամ այլ ֆինանսական շահի աղբյուր: Այդ կազմակերպությունների հիմնական միջոցները գոյանում են տնային տնտեսությունների կամավոր մուծումներից:

Տնային տնտեսություններն անձանց ոչ մեծ խումբ է, որոնք բնակվում են միևնույն կացարանում, միավորում իրենց հարստությունը և եկամուտը կամ դրա մի մասը, և որոնք միասին սպառում են ապրանքների և ծառայությունների որոշ տեսակներ, հիմնականում՝ կացարանը և սննդամթերքը: Տնային տնտեսությունների հատվածում ներառված միավորները մասնակցում են արտադրությանը՝ տրամադրելով իրենց աշխատուժը և ձեռք են բերում ապրանքներ և ծառայություններ՝ շուկայում: Բացի դրանից, տնային տնտեսությունները երբեմն հանդիսանում են մանր, ոչ կորպորատիվ ձեռնարկությունների (ֆերմաներ, ընտանեկան ռեստորաններ, խանութներ և այլն) սեփականատերեր: Այդ ոչ կորպորատիվ ձեռնարկություններն արտադրում են ապրանքներ և ծառայություններ՝ շուկայում վաճառքի, ինչպես նաև, մասամբ, սեփական սպառման համար: Ոչ կորպորատիվ ձեռնարկությունների գործունեության ֆինանսական արդյունքը հանդիսանում է խառը եկամուտը, որը ներառում է ինչպես շահույթի, այնպես էլ աշխատանքի վարձատրություն տարրեր:

Վերը թվարկված հատվածների փոխադարձ կապն այլ երկրների հետ արտացոլելու նպատակով ձևավորվում է պայմանական հատված՝ «արտերկիր», որը միավորում է բոլոր կառուցվածքային միավոր-ոչ ռեզիդենտներին այն մասում, որտեղ դրանք փոխհամագործակցում են ազգային տնտեսության ռեզիդենտների հետ:

Non-profit institutions serving households

are legal persons, which principally produce non-market services for households. Their status does not permit them to be a source of income, profit or other financial gain for the units that establish them. Main resources of these institutions are formed from the voluntary payments of households.

Household is a small group of persons who share the same living accommodation, who pool some, or all, of their income and wealth and who consume certain types of goods and services collectively, mainly housing and food. Units included in the households sector participate in production with their labour force and acquire goods and services in the market. Besides, households are sometimes owners of small unincorporated enterprises (farms, family restaurants, shops, etc.) These unincorporated enterprises produce goods and services for sale in a market and partly for own consumption. Financial outcome of activity of unincorporated establishments is the mixed income, including profit both the surplus elements and the remuneration of work.

In order to reflect the mutual relations of the above-mentioned sectors with the other countries conditional sector rest of the world is formed consisting of all non-resident institutional units that enter into transactions with residents of the national economy.